Հաստատում եմ
Հյուսիսային համալսարանի
Ռեկտոր Մ.Մակիչյան

Հաստատված է Հյուսիսային
համալսարանի գիտխորհրդի
2026թ ապրիլի 30-ի նիստում (արձ. N3)

ԿԱՐԳ

Հյուսիսային համալսարանի ուսանողների կարիքների վերհանման, աջակցության և ակադեմիական խորհրդատվության կազմակերպման վերաբերյալ

Երևան 2026

Կարգ Հյուսիսային համալսարանի ուսանողների կարիքների վերհանման, աջակցության և ակադեմիական խորհրդատվության կազմակերպման վերաբերյալ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում են Հյուսիսային համալսարանում ուսանողների կրթական և սոցիալական կարիքների վերհանման, աջակցության և ակադեմիական խորհրդատվության կազմակերպման սկզբունքները, ձևերը և պատասխանատուների գործառույթները:

1.2. Ուսանողների կարիքների վերհանման, աջակցության և ակադեմիական խորհրդատվության համակարգը նպատակ ունի՝

- բացահայտել ուսանողների կրթական և աջակցման կարիքները,
- նպաստել ուսանողների ակադեմիական, սոցիալական և անձնային զարգացմանը,
- աջակցել ուսանողների կրթական միջավայրին հարմարվելու գործընթացին,
- ապահովել ուսանողակենտրոն կրթական միջավայր,
- խթանել ուսանողների ներգրավվածությունը համալսարանական կյանքում,
- նպաստել կրթական ծրագրերի և ուսանողական ծառայությունների շարունակական բարելավմանը:

1.3. Ուսանողների կարիքների վերհանման գործընթացը համալսարանում իրականացվում է հարցումների, հանդիպում-քննարկումների և հետադարձ կապի այլ մեխանիզմների միջոցով:

1.4. Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցումների կազմակերպումն ու համակարգումն իրականացնում է համալսարանի Որակի ապահովման վարչությունը՝ համագործակցելով ֆակուլտետների, ամբիոնների, կուրսային խորհրդատուների՝ կուրսղեկների և Ուսանողական խորհրդի հետ :

1.5. Ուսանողների կարիքների վերհանման, աջակցության և խորհրդատվական աշխատանքների կազմակերպման նպատակով համալսարանում ակադեմիական խմբերին կցվում են կուրսղեկներ:

1.6. Կուրսղեկը նշանակվում է համապատասխան ֆակուլտետի դեկանի առաջարկությամբ՝ ամբիոնի վարիչի համաձայնությամբ, հաշվի առնելով դասախոսի մասնագիտական ուղվածությունը և/կամ պրակտիկ գործունեության ոլորտը, հաղորդակցական կարողությունները, ինչպես նաև ուսանողների հետ արդյունավետ համագործակցության փորձը:

1.7. Կուրսղեկի գործունեությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- ուսանողակենտրոն մոտեցում,
- համագործակցություն և փոխադարձ վստահություն,
- օբյեկտիվություն և պատասխանատվություն,
- շարունակական աջակցություն և հետադարձ կապ։

1.8. Կուրսղեկի լիազորությունները կարող են դադարեցվել՝

- հիմնական պաշտոնից ազատվելու դեպքում,
- սեփական դիմումի համաձայն,
- աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարման դեպքում,
- համալսարանի ղեկավարության որոշմամբ,
- այլ իրավաչափ հիմքերով։

2. Ուսանողների կարիքների վերհանման և աջակցության հիմնական ուղղությունները

Ուսանողների կարիքների վերհանման և աջակցության գործընթացը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները.

2.1. Ուսանողների կրթական կարիքների և ակնկալիքների ուսումնասիրություն։

2.2. Ուսանողների ակադեմիական աջակցության կազմակերպում։

2.3. Ուսումնական միջավայրում ուսանողների խնդիրների բացահայտում և աջակցություն։

2.4. Ուսումնական խմբերում բարենպաստ և համագործակցային միջավայրի ձևավորում։

2.5. Ուսանողների ներգրավվածության խթանում համալսարանական, գիտական, մշակութային և հասարակական կյանքում։

2.6. Ուսանողների և համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև արդյունավետ հաղորդակցության ապահովում։

2.7. Ուսանողների հետ հետադարձ կապի և կրթական կարիքների բավարարվածության գնահատման իրականացում։

2.8. Ուսանողների կարիքների վերհանման արդյունքների օգտագործում կրթության որակի շա-ռունակական բարելավման գործընթացներում։

3. Որակի ապահովման վարչության գործառույթները ուսանողների կարիքների վերհանման գործընթացում

Որակի ապահովման վարչությունը՝

3.1. Կազմակերպում և համակարգում է ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցումները։

3.2. Մշակում և կիրառում է հարցումների, հետադարձ կապի և գնահատման համապատասխան գործիքներ։

3.3. Վերլուծում է ուսանողների կարիքների և բավարարվածության գնահատման արդյունքները։

3.4. Ներկայացնում է առաջարկություններ կրթական ծրագրերի, ուսումնական գործընթացի և ուսանողական ծառայությունների բարելավման վերաբերյալ։

3.5. Համագործակցում է ֆակուլտետների, ամբիոնների և կուրսղեկի հետ ուսանողների կարիքների բացահայտման և համապատասխան միջոցառումների իրականացման ուղղությամբ։

3.6. Ապահովում է ուսանողների հետ հետադարձ կապի մեխանիզմների շարունակական կատարելագործումը։

4. Կուրսղեկի գործառույթները

Կուրսղեկը՝

4.1. Աջակցում է ուսանողների ադապտացման գործընթացին համալսարանական կրթական միջավայրում։

4.2. Ուսանողներին ծանոթացնում է համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին, ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերին և այլ կարգավորող փաստաթղթերին։

4.3. Տրամադրում է խորհրդատվություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական պահանջների, ուսանողական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ։

4.4. Աջակցում է ուսանողների և դասախոսների միջև կառուցողական համագործակցության ձևավորմանը։

4.5. Հետևում է ուսանողների ակադեմիական առաջադիմությանը և հաճախումներին, անհրաժեշտության դեպքում կազմակերպում համապատասխան քննարկումներ։

4.6. Բացահայտում և վերլուծում է ուսանողների ուսումնական դժվարությունները և աջակցում դրանց հաղթահարման գործընթացին։

4.7. Մասնակցում է ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման գործընթացներին։

4.8. Աջակցում է ուսանողների մասնակցությանը համալսարանի կողմից իրականացվող հարցումներին և հետադարձ կապի գործընթացներին։

4.9. Աջակցում է կոնֆլիկտային իրավիճակների կարգավորմանը՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և փոխադարձ հարգանքի սկզբունքները։

4.10. Իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ուսանողների անհատական առանձնահատկությունների, կրթական կարիքների և սոցիալական պայմանների հաշվառմամբ։

4.11. Խթանում է ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական, մշակութային, մարզական և հասարակական միջոցառումներին։

4.12. Նպաստում է առողջ և անվտանգ կենսակերպի ձևավորմանը և ուսանողների բարեկեցությանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանը։

4.13. Կազմակերպում է պարբերական հանդիպումներ և խորհրդատվություններ ուսանողների հետ։

4.14. Համագործակցում է համալսարանի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ ուսանողների խնդիրների լուծման և կարիքների վերհանման գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով։

4.15. Դեկանատին և համապատասխան ամբիոնին ներկայացնում է տեղեկատվություն ակադեմիական խմբի ընդհանուր իրավիճակի, առաջացած խնդիրների և իրականացված աշխատանքների վերաբերյալ։

4.16. Խրախուսում է ուսանողական ինքնակառավարման մարմինների և ուսանողական ակտիվի ձևավորումը և գործունեությունը։

5. Կուրսղեկի գործունեության արդյունավետության գնահատման չափանիշները

Կուրսղեկի գործունեության արդյունավետությունը գնահատվում է՝ հաշվի առնելով.

5.1. Ուսանողների ակադեմիական առաջադիմության և մասնակցության ցուցանիշները։

5.2. Ուսանողների մասնակցությունը համալսարանի ակադեմիական, մշակութային և հասարակական գործունեությանը։

5.3. Ուսանողական խմբում համագործակցային և բարենպաստ միջավայրի առկայությունը։

5.4. Ուսանողների հետ իրականացվող խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքների արդյունավետությունը։

5.5. Ուսանողների հետ հետադարձ կապի արդյունքները։

5.6. Ուսանողների կարիքների վերհանման գործընթացներին աջակցությունը։

5.7. Նորարարական և արդյունավետ մեթոդների կիրառումը խորհրդատվական աշխատանքներում։

5.8. Համալսարանի կրթության որակի ապահովման գործընթացներին աջակցությունը։

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի հաստատումից հետո։

6.2. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համալսարանի սահմանված կարգով։

6.3. Սույն կարգի պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում են համապատասխան ֆակուլտետների դեկանները, Որակի ապահովման վարչությունը և համալսարանի ղեկավարությունը։

Հավելված 1

Կուրսղեկների կողմից ուսանողների կարիքների վերհանման և խորհրդատվական աշխատանքների իրականացման ժամանակացույց			
Առկա ուսուցման համակարգ			
	Գործընթաց	**Իրականացման ժամկետ**	**Պատասխանատու**
	Ուսանողների կարիքների վերհանում, սկզբնական խորհրդատվություն և աղապտացման աջակցություն	Ուսումնական կիսամյակի մեկնարկից հետո 15 օրվա ընթացքում	Կուրսղեկ
	Ուսանողների կրթական և կազմակերպչական խնդիրների քննարկում, հետադարձ կապի ապահովում	Կիսամյակի ընթացքում՝ մեկ եռամսյակ անց, 15 օրվա ընթացքում	Կուրսղեկ
	Ուսանողների առաջադիմության, մասնակցության և կարիքների ամփոփ գնահատում	Կիսամյակի ավարտին նախորդող 15 օրվա ընթացքում	Կուրսղեկ
Հեռակա ուսուցման համակարգ			
	Գործընթաց	**Իրականացման ժամկետ**	**Պատասխանատու**
	Ուսանողների կարիքների վերհանում և խորհրդատվական աջակցություն	Յուրաքանչյուր կիսամյակի մեկնարկին	Կուրսղեկ
	Ուսանողների հետ ամփոփ քննարկումների և հետադարձ կապի իրականացում	Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին	Կուրսղեկ
	Լրացուցիչ հանդիպումներ, անհատական խորհրդատվություններ և խնդիրների քննարկում	Ըստ անհրաժեշտության՝ ուսումնական տարվա ընթացքում	Կուրսղեկ